

2019-Ը ԹՈՒՄԱՆՅԱՆԱԿԱՆ ԵՎ ԿՈՄԻՏԱՍՅԱՆԱԿԱՆ ՏԱՐԻ

...ՈՒ ԽՈՍԵՑ ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ՎՐԱՅԵՐԵՆ

95 տարի առաջ Թիֆլիսում, վրացերենով, լույս տեսավ Հովհաննես Թումանյանի հատընտիր ժողովածուն: Այն թարգմանել էր տակավին երիտասարդ, հետազայում ակադեմիկոս-բանաստեղծ Իոսեբ Գրիշաշվիլին: Շնորհաշատ բանաստեղծն իր ողջ վարպետությունը, սրտի հուրը ներդրել էր այդ գործում, ինչի շնորհիվ վրաց ընթերցողին սիրելի դարձան Թումանյանի «Անուշը», «Փարվաման», «Շունն ու կատուն», «Մի կաթիլ մեղրը», «Գիբորը», «Նետոյի քարաբաղնիսը», «Հին օրհնությունը», «Անբախտ վաճառականները» եւ, իհարկե, «Վրաստանի բանաստեղծներին» ստեղծագործությունները:



Թումանյանի մահից հետո, Գրիշաշվիլին նպատակ է դրում անպայման թարգմանել Թումանյանի ընտիր երկերի ժողովածուն: Նրան այդ գործում մեծապես օգնում է Գեուրգ Բաշինջաղյանը: Եվ նա կատարում է խոստումը: Ուղիղ մեկ տարի անց, Թումանյանի մահվան առաջին տարեկիցին, վրաց ընթերցողի դատին է հանձնվում Հովհաննես Թումանյանի «Ընտիր երկերի ժողովածուն»: Իոսեբ Գրիշաշվիլու թարգմանությամբ եւ նրա իսկ առաջաբանով: Ահա այդպես է հատուցում վրաց ժողովուրդը «Անձ լուռեցուն» վրաց ժողովրդի նկատմամբ տածած որդեգրական մեծ սիրո, ժողովուրդների միջեւ բարեկամություն սերմանելու համար:

Գրքի առաջաբանում ապագա ակադեմիկոսը գրել է. «Եվրոպացի գրողներին, լավ թե վատ, կարծես բոլորին ենք ճանաչում կամ ձգտում ենք ճանաչել, այդ բնագավառում ետ մնալը մեզանում ամոթ է համարվում: Սեփական գրականությունը չիմանալը իսկ մեզ չի հուզում: Առավել եւս վատ ենք ճանաչում մեր դրկից հարեւաններին, որոնք աշխարհագրականորեն, թե պատմականորեն այդքան մոտ են մեզ...»:

Դառն է խոստովանությունը եւ ճշմարտացի: (Թերեւս, բացառություն էր Հովհաննես Թումանյանը, ով մինչեւ հեղափոխությունն արդեն ճանաչված էր վրացական շրջաններում): Գրիշաշվիլին ցավով է արձանագրում այդ փաստը, բայց դրանով չի բավարարվում: Մինչ այդ տողերը գրելը, նա արդեն 1918 թվականին հրապարակ էր հանել «Սայաթ-Նովա» մեմորիալը: Հետաքրքիր է այդ աշխատության ստեղծման շարժառիթը: Իր իսկ՝ Գրիշաշվիլու խոստովանությամբ, այդ միտքը հղացել է 1914 թվականի մայիսի 15-ին, երբ Թիֆլիսում, Սուրբ Գեուրգ եկեղեցու բակում Հովհաննես Թումանյանին եւ Գեուրգ Բաշինջաղյանին անմիջական մասնակցությամբ բացվում է Սայաթ-Նովայի հուշատախտակը:

Այդ արարողությանը մասնակցում էր թիֆլիսցիների մի հոծ բազմություն: Մեծ բանաստեղծի երկրպագուները բերել էին մեկ հատիկ կարմիր վարդ՝ Սայաթ-Նովայի այդքան սիրված ու գովերգած ծաղիկը: Վերջում գոյացավ վարդերի հսկայական մի թունր: Հենց այդ օրն էլ դրվեց գեղեցիկ մի ավանդույթ՝ սայաթնովյան Վարդատոնի հիմքը, որը չընդհատվեց անգամ Հայրենական պատերազմի դժնդակ տարիներին:

Ահա այն անդրանիկ Վարդատոնում էլ երիտասարդ բանաստեղծ Գրիշաշվիլին առաջին անգամ տեսավ Ամենայն Հայոց բանաստեղծին: Նա եկել էր Սուրբ Գեուրգ եկեղեցի իր ավագ գրչակցի ընկերներ Կոստե Մաղաշվիլու, Իլյա եւ Նինո Նակաշիձեների, Իոսեբ Իմեդաշվիլու հետ:

Սայաթնովյան այդ օրն ամեն ինչ Սայաթ-Նովայով էր ներշնչված: Գրիշաշվիլին ցավով է նկատում, որ ո՛չ ինքը, ո՛չ էլ իր ավագ ընկերները գրեթե ոչինչ չգիտեն... Սայաթ-Նովայի մասին: Եվ այն, ինչ գիտեն, լեզունների շղարշով էր պարուրված: Կոստե Մաղաշվիլին դիմում է Գրիշաշվիլուն՝ ասելով. «Դու մոքալաքե (քաղաքաբնակ) ես, ճարպիկ տղա, տեղացիներից իմացած կլինես, իսկ եթե ոչ՝ իմացիր, նեղություն կրիր եւ վրաց ժողովրդին ծանոթացրու երեք լեզուներով գրող աշուղին»:

Ռժվարին գործին: Եվ այդ ռժվարին աշխատանքում նա ապավինում էր Հովհաննես Թումանյանին, ով երիտասարդ գրողներին փայփայելու, նրանց ուղղություն տալու աստվածատուր շնորհք ուներ:

«Երբ որեւէ տարեթիվ չարածճի երեխայի ման չէր ենթարկվում ինձ, իմ ռժվարության սպեղանին Թումանյանի էրուդիցիան էր... Եվ Հովհաննեսն ինձ դիմավորում էր յուրօրինակ ժպիտով, որ մի բանաստեղծություն արժեք, հարցուփորձ էր անում աշխատանքից, եւ նրա ուրախությունը սահման չուներ, երբ ես ասում էի, որ աշխատանքն արդեն ավարտին է մոտենում: Իսկ երբ հրապարակային գեկուցում կարդացի Սայաթ-Նովայի մասին, Թումանյանը եւ Բաշինջաղյանը ներկա էին այդ երեկոյին: Նրանք առաջին շարքում էին նստած եւ իմ յուրաքանչյուր խոսքի վրա գլխով էին անում, իսկ երբեմն էլ հայացքներ փոխանակում միմյանց հետ...»,- այսպես է գրել 1918 թվականին Իոսեբ Գրիշաշվիլին Թումանյանին նվիրված հոդվածներից մեկում:

1953 թվականին Հովհաննես Թումանյանին նվիրված իր մեկ այլ հոդվածում նա նշել է. «... Ահա այսպես եղբայրացրեց Սայաթ-Նովան ինձ ու Հովհաննես Թումանյանին»:

Սայաթնովյան անդրանիկ Վարդատոնից հետո, Թումանյանի եւ Գրիշաշվիլու ծանոթությունը վերածվում է ջերմ բարեկամության: Երիտասարդ բանաստեղծը հաճախ էր լինում Թումանյանի տանը, երկար զրուցում Վարպետի հետ գրականության, արվեստի, ժողովուրդների բարեկամության մասին: Մտերմիկ այդ զրույցներից մեկի ժամանակ, երբ Գրիշաշվիլին այցելության էր եկել հիվանդ Թումանյանին, Ամենայն հայոց բանաստեղծն ասում է. «Ուզում եմ կատարել վաղեմի երազանքս եւ թարգմանել Հոմերոսին, Ֆիրդուսուն եւ Ռուսթավելուն, հատկապես ինձ դուր է գալիս «Ընձենավորը», եւ, եթե հիվանդությունս չխանգարի, զարմանն անպայման ձեռնամուխ կլինեմ այդ գործին»:

Թումանյանն այլեւս ժամանակ չուներ: Ցավոք, մահն ավելի շուտ եկավ, քան խոստումնալից այն գարունը:

Թումանյանի մահից հետո, Գրիշաշվիլին նպատակ է դրում անպայման թարգմանել Թումանյանի ընտիր երկերի ժողովածուն: Նրան այդ գործում մեծապես օգնում է Գեուրգ Բաշինջաղյանը: Եվ նա կատարում է խոստումը: Ուղիղ մեկ տարի անց, Թումանյանի մահվան առաջին տարեկիցին, վրաց ընթերցողի դատին է հանձնվում Հովհաննես Թումանյանի «Ընտիր երկերի ժողովածուն»: Իոսեբ Գրիշաշվիլու թարգմանությամբ եւ նրա իսկ առաջաբանով: Ահա այդպես է հատուցում վրաց ժողովուրդը «Անձ լուռեցուն» վրաց ժողովրդի նկատմամբ տածած որդեգրական մեծ սիրո, ժողովուրդների միջեւ բարեկամություն սերմանելու համար:

Եվ այսպես, 1924 թվականին Թումանյանը խոսեց վրացերեն, խոսեց հարազատի պես, քանզի նրան թարգմանել էր վրաց լավագույն բանաստեղծներից մեկը, ով այդ գործում ներդրել էր իր ողջ տաղանդը եւ, որ ամենակարեւորն է, իր սրտի հուրը: Այդ հրատարակությունն արժանանում է բարձր գնահատականի, իսկ Վրաստանի կոմկուսի պաշտոնաթերթը՝ «Կոմունիստի»-ն, 1924 թվականի դեկտեմբերի 7-ի համարում տպագրված գրախոսականում Գրիշաշվիլու գործը համարում է որպես «առաջին քայլերը անդրկովկասյան ժողովուրդների մշակույթների մերձեցման ասպարեզում»:

Թումանյանի վերոհիշյալ ժողովածուն ունեցավ եւս երեք հրատարակություն՝ 1932, 1948 եւ 1956 թվականներին:

Վրաց ընթերցողը սիրեց Թումանյանին: Նրանով սկսեցին հետաքրքրվել վրաց բանաստեղծներն ու գրականագետները: Նրան սրտառուջ տողեր են նվիրում նույն Գրիշաշվիլին ու Գիորգի Լեոնիձեն, Ալեքսանդրե Աբաշելին ու Պաուլ Իաշվիլին, Տիգրան Տաթևաձեն ու Սիմոն Չիքովանին, Կաստ Գորգաձեն ու Սիկո Փաշալաշվիլին:

Վրաստանի գրականագիտական միտքը հաճախակի անդրադարձել է Հովհաննես Թումանյանի ստեղծագործությանը, նրա հասարակական գործունեությանը: Վրացական մամուլում տարբեր առիթներով բազմաթիվ հոդվածներ են տպագրվել՝ նվիրված հայ մեծանուն

ԼԵՎՈՆ ԱԶՐՈՅԱՆ
«Սովետական Վրաստան» թերթի 70-ական թվականների թղթակից, ներկայումս «Արմենպրես» լրատվական գործակալության տնօրենի խորհրդատու

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԸ՝ ՄԱԿԱՐ ԵԿՄԱԼՅԱՆԻ ԵՐԳՉԱԽՄԲԻ ՍԱՆ

Հայ երաժշտական ստեղծագործության, ինչպես նաև երաժշտագիտության ամենախոշոր ու ամենապայծառ դեմքը Կոմիտասն է՝ Սողոմոն Գեուրգի Սողոմոնյանը: «Հայ ժողովրդական երգը» գրում է Կոմիտասի ստեղծագործությունների գիտակ, պրոֆեսոր Հարությունը: «Հանձին Կոմիտասի գտել է իր ամենացայտուն վարպետին: Նա ուսանելի է շատ տեսակետներից: Եվ հայ երաժշտության զարգացմանը նախանձախոնդի ամեն ոք նախ պետք է լիովին ուսումնասիրի եւ հասկանա Կոմիտասին ու ապա միայն սկսի ստեղծագործել»:

Ծանոթանալով Սողոմոն Սողոմոնյանի (Կոմիտաս) կյանքին ու ստեղծագործությանը՝ ակամա մտածում ես, թե՛ ինչ ճակատագիր կունենար հորից ու մորից վաղ հասակում զրկված 11-ամյա այդ որբուկը, եթե պատահական մի երջանիկ դիպվածով նա էջմիածին չփոխադրվեր:

«Քյոթահիայի փոխառաջնորդ Գեուրգ վարդապետ Դերձակյանը 1881թ., եպիսկոպոս ձեռնադրվելու նպատակով, էջմիածին է մեկնում: Հայոց կաթողիկոս, երաժշտասեր Գեուրգ Դ-ի կարգադրությամբ, Դերձակյանն իր հետ պետք է տաներ լավ ծայն ունեցող մի որբ երեխայի: Էջմիածին գնալու բախտը քսան որբերից վիճակվում է Սողոմոնին, ով եւ Դերձակյանի հետ մեկնում է Էջմիածին»:

Սողոմոնը հայերեն չէր խոսում, քանի որ նրա ծնողները թրքախոս էին, եւ երեխան խոսում էր միայն թուրքերեն: Դրա փոխարեն, նա իր ծայնը ծնողներից ժառանգել էր թովիչ ծայն ու հիանալի եւ գեղեցիկ երաժշտական տվյալներ: Եվ հայտնի է, որ ճեմարան ընդունվելիս հատուկ ուշադրություն էր

դարձվում ընդունվողի ծայնին՝ նկատի ունենալով, որ ապագա հոգեւորականը պետք է եկեղեցում լավ երգել կարողանա:

Կաթողիկոսը դեմ էր, որ Սողոմոնը դառնա Գեուրգյան ճեմարանի սան, որովհետեւ նա սկզբում երգում է թուրքերեն (հայրենասեր կաթողիկոս Գեուրգ Դ-ն, Գեուրգյան ճեմարան սուրբ օջախը եւ թուրքերենը), բայց երբ երեխան երգում է հայերեն «Լույս Չվարթը», Սողոմոնը նկատում է, որ «կաթողիկոսի աչքերից արցունքներ գլորվեցին եւ կորան նրա թավ մորուքի մեջ»: «Որդյակ իմ, որբ իմ...» ասելով եւ գրկելով Սողոմոնին՝ կաթողիկոսը հրամայում է ճեմարան տանել նրան»,- այս մասին իր «Կոմիտաս» գրքում (Երեւան, «Հայպետհրատ» 1961) հիշատակում է կո-



միտասագետ Սամսոն Գասպարյանը: Բարեբախտաբար, երաժշտական լավ լսողությունն ու հիանալի ծայնը մեղմում են նրա հայերեն չիմանալու հանգամանքը, եւ նա ընդունվում է ճեմարան: Ահա թե ինչ է գրում այդ մասին իր հուշերում լեզվաբան Մանուկ Աբեղյանը. «Երբ էջմիածին բերին Սողոմոնին (այդպես էր կոչվում Կոմիտասն այն ժամանակ), նա հայերեն չէր հասկանում, բայց լավ երգում էր եկեղեցական եւ այլ երգեր: Ինչպես ինքն ինձ ասել է, հենց այդ երգելու շնորհի համար է եղել, որ նրան էջմիածնի ճեմարան են տվել: Եվ նա շատ ուրախ էր դրա համար, որովհետեւ իր ծննդավայր Կուտիսայի (Քյոթահիա) հետ մի առանձին սիրով ու լավ հիշողություններով կապված էր»:

...Եվ 1881թ. սեպտեմբերի 15-ին նա արդեն Գեուրգյան ճեմարանի գիշերօթիկի սան էր: Ուսման առաջին տարում իր աշխատասիրությամբ ու զարմանալի ընդունակություններով Սողոմոնը գրավում է աշ-

(Շարունակությունը՝ 6-րդ էջում)

2019-Ը ԹՈՒՄԱՆՅԱՆԱԿԱՆ ԵՎ ԿՈՄԻՏԱՍՅԱՆԱԿԱՆ ՏԱՐԻ

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԸ՝ ՄԱԿԱՐ ԵԿՄԱԼՅԱՆԻ ԵՐԳՉԱԽՄԲԻ ՍԱՆ

(Սկիզբը՝ 5-րդ էջում)

ակերտների եւ ուսուցիչների ուշադրությունը: Առանձնապես մեծ եռանդով նա նվիրվում է երաժշտությանն ու երգեցողությանը եւ կարճ ժամանակամիջոցում դրսևերում իր երաժշտական արտակարգ շնորհքը:

1893թ. ավարտելով ճեմարանը՝ ձեռնադրվում է աբեղա եւ Խրիմյան Հայրիկի առաջարկությամբ ստանում Կոմիտաս անունը՝ նշանակվելով Գեւորգյան ճեմարանի երաժշտության ուսուցիչ: Այստեղ նրա վրա մեծ ազդեցություն է ունենում երգեցողության ուսուցիչ, երաժշտագետ Քրիստափոր Կարա-Մուրզան, ով Կոմիտասին առաջարկում է ստեղծել քառաձայն եւ բազմաձայն երգչախումբ: Երբ Կարա-Մուրզային հեռացնում են Գեւորգյան ճեմարանից, կոտրված սրտով, բայց առանձին ոգեւորությամբ ու համառությամբ Կոմիտասն ստանձնում է իր պարտականությունը: Մայր տաճարում կազմակերպում է բազմաձայն երգչախումբ:

1895թ. Կոմիտասը ձեռնադրվում է վարդապետ եւ դառնում էջմիածնի միաբան, բայց առաջացող մասնագիտական դժվարությունները, նրան մտովի տանում են դեպի գեղարվեստի ու երաժշտական մշակույթի մի աշխարհ, որտեղ միայն հագուրդ կստանար նրա ուսման անհագ ծախսը:

Եվ ահա, 1895թ. ուսումը շարունակելու նպատակով, Կոմիտասը մեկնում է Անդրկովկասի այդ ժամանակվա հայ մտավորականության կենտրոն՝ Թիֆլիս:

Այստեղ, Ներսիսյան դպրոցում, գործում էր առաջնակարգ երգչախումբ, որի ղեկավարը հայ մշակավոր կոմպոզիտոր Մակար Եկմալյանն էր, որն ավարտել էր Պետերբուրգի կոնսերվատորիան, արժանացել ռուս հանճարեղ կոմպոզիտոր-երաժշտագետներ Ռիմսկի-Կորսակովի եւ Չայկովսկու բարձր գնահատականին:

Կոմիտասը հաճախում է Ներսիսյան դպրոցի խմբի պարապմունքներին, որոնք առանձին հետաքրքրություն էին ներկայացնում Եկմալյանի խմբավարական արվեստին եւ հայ եկեղեցական երաժշտությանը մոտիկից ծանոթանալու համար: Նաեւ որոշում է ընդունվել Թիֆլիսի երաժշտանոցը, սակայն Մակար Եկմալյանը խորհուրդ չի տալիս՝ խոստանալով անձամբ «զինել» նրան տեսական եւ գործնական անհրաժեշտ գիտելիքներով:

1895թ. հոկտեմբերի 30-ին ճեմարանի տեսուչ Կարապետ Կոստանյանին ուղարկած նամակում Կոմիտասը գրում է. «...ես արդեն սկսել եմ կանոնավոր պարապմունք... ապրուստս շատ լավ է: Ամբողջ օրը տանն եմ լինում եւ քաղաք եմ իջնում միայն դասեր առնելու համար: Այժմ սովորում եմ պ. Մակար Եկմալյանի մոտ, ծրիաբար, երաժշտության ներդաշնակության տեսությունը եւ գործադրությունը, որը եւ լիապես կամբողջացնեմ մինչեւ մայիսի վերջը»:

Էջմիածնի վանականի սահմանափակ, միալար ու ինքնամփոփ կյանքից հետո, Թիֆլիսի միջավայրն ու Մակար Եկմալյանի պարապմունքները բարերար ազդեցություն են ունենում Կոմիտասի վրա:

Չնայած այս ամենին, այնուամենայնիվ, Մակար Եկմալյանի հետ ունեցած որոշ տարածայնությունների պատճառով, Կոմիտասը ձգտում է հասնել ավելիին, սկսում է իր հետետեղական պայքարը հայ երաժշտության ինքնության պաշտպանության համար:

Հայտնի է, որ հայկական երաժշտության ժխտման որոշ տենդենցներ է արտահայտել Մակար Եկմալյանը,

որին անդրադարձել է Կոմիտասը՝ ցույց տալով այդ հարցում նրա անիրավացի լինելը:

Կոմիտասի ժառանգության մասին լրիվ պատկերացում կազմելու նպատակով, անհրաժեշտ է ծանոթանալ «Պատարագ»-ի հետ, որն առանձնահատուկ տեղ է գրավում նրա ստեղծագործությունների մեջ: «Պատարագ»-ը պրոֆեսիոնալ բարձր արժեքներով օժտված մեծ մասշտաբի ստեղծագործություն է, որի վրա Կոմիտասի մահից հետո շարունակել է աշխատել նրա սաներից մեկը՝ Վարդան Սարգսյանը:

Հայ ժողովրդական եւ եկեղեցական երաժշտությունը համարելով քույր ու եղբայր՝ Կոմիտասը «Պատարագ»-ի իր մշակումն առատորեն հագեցրել է բուն ժողովրդական երաժշտության տարրերով: Նրանում շատ կան նրբորեն ընտրված եւ ազգային ոճի տեսակետից մաքրված, զտված մեղեդիներ: Դրանցից է



«Խորհուրդ խորին» երգի վեհաշունչ մեղեդին:

Երբ խոսվում է Մակար Եկմալյանի հայ երաժշտության պատմության մեջ ունեցած նրա դերի մասին, անմիջապես հիշատակվում է «Պատարագ»-ի նրա մշակումը՝ որպես նրա գլուխգործոց: Սակայն նույնը տեղի չի ունենում Կոմիտասի մասին խոսելիս, որովհետեւ Կոմիտասի ստեղծագործական խոշորագույն նվաճումները, նախեւառաջ, կապված են հայկական ժողովրդական՝ գեղջկական երգերի հիասքանչ ու աննման մշակումների հետ, որոնք նրա ստեղծագործության հիմքն ու էությունն են կազմում:

Դեռ 1897թ. Բեռլինից գրած նամակներից մեկում Կոմիտասը գրում էր. «...Ուսուցչապետս միշտ կրկնում է. Դուք ստեղծել եք երաժշտական ազնիվ ու ինքնուրույն ոճ, որը կարմիր գծի պես Ձեր ամբողջ գրվածքների եւ շարադրությանց մեջ պայծառ անց է կենում: Այդ ոճը ես անվանում եմ հայկական ոճ, ասում է, որովհետեւ մեր երաժշտական ծանոթ աշխարհի համար նորություն է»:

Ահա այդ «երաժշտական աշխարհի համար նորություն» հանդիսացող «ազնիվ ու ինքնուրույն» ոճն էր այն ուղին, որով անցավ ստեղծագործական մեծ քանքարով օժտված գեղագետ Կոմիտասը, ժողովրդական երաժշտության հիման վրա ազգային կլասիկ երաժշտության ստեղծման ուղին, որը Կոմիտասը հաղթահարեց փայլուն կերպով:

1898 թվականին «Արարատ»-ում Կոմիտասի «Երգեցողությունը ս. Պատարագի» հողվածը նրա գրախոսականն է, որ իր մեջ ընդգրկած հարցերի բազմակողմանի լուսաբանությամբ ու գիտական բարձր մակարդակով, զգալի չափով տարբերվում է նախորդ հողվածներից: Դա 1896թ. Լայպցիգում լույս տեսած Մակար Եկմալյանի «Պատարագ»-ին է վերաբերում եւ ընդգրկում է այդ ստեղծագործության մասնագիտական վերլուծությունը: Գիտնականին վայել խստապահանջ հետետեղականությամբ Կոմիտասը, հող-

վածում դեմ դուրս գալով Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի իր ուսուցչին եւ առարկելով նրան, ցույց է տալիս հայկական ինքնուրույն երաժշտությունը ժխտող սխալ ու անընդունելի գաղափարը: Ըստ Մակար Եկմալյանի «Պատարագ»-ի առաջաբանի, ստացվում էր, որ մեր երաժշտությունը արաբա-իրանականի մի ճյուղն է: Հենց այդ սխալ ու անընդունելի մտայնության դեմ է ուղղված Կոմիտասի այս մեկնաբանությունը, որը նշանակալից ավանդ է նրա երաժշտագիտական ժառանգության մեջ:

Կոմիտասի գործունեության ամենափայլուն էջերից են նրա հրապարակախոսական ելույթները, դասախոսություններն ու հողվածները: Նա բացառիկ դեմք է հայ երաժշտական իրականության մեջ: Նրա դասախոսությունները զուգակցվել են իր ստեղծած երգչախմբի եւ անձամբ իր փայլուն համերգներով Կովկասի, Մերձավոր Արեւելքի եւ Արեւմտյան Եվրոպայի (Բեռլին, Փարիզ, ժնեւ, Լոզան) համարյա բոլոր խոշոր քաղաքներում: Այս մասին են վկայում նաեւ 1905 թվականին «Մշակ»-ում (N65-66) լույս տեսած Թիֆլիսում կարդացած «Հայ ժողովրդական ու եկեղեցական երաժշտության» վերաբերյալ դասախոսություններից մեկի ամփոփումը:

Խմբավարական արվեստի բնագավառում Կոմիտասն, անշուշտ, հետեւել է իր նախորդների՝ իր ուսուցիչներ Քրիստափոր Կարա Մուրզայի եւ Մակար Եկմալյանի սովորություններին ու խորհուրդներին, սակայն ինքն էլ, իր հերթին, զգալի չափով զարգացրել է այդ մշակույթը: Կոմիտասը նաեւ վերանայել ու վերացրել է այն անջրպետը, որ մինչ այդ գոյություն ուներ հոգեւոր եւ ժողովրդական երգերի միջեւ համերգային ծրագրերում: Այս մասին են վկայում օտարազգի (գերմանական, ֆրանսիական, ռուսական եւ այլն) մամուլում լույս տեսած բազմաթիվ նյութերն ու հրապարակախոսական հողվածները:

Փարիզում 1898-1949 թվականներին հրատարակվող «Անահիտ» պարբերականում նրա հիմնադիր եւ խմբագիր Արշակ Չոպանյանը, անդրադառնալով Կոմիտասի ստեղծագործություններին, ներկա գտնվելով նրա համերգներին, լսելով Փարիզում ու այլուր ունեցած «Հայ երաժշտության ինքնուրույնության մասին», «Հայոց եկեղեցական երաժշտությունը ժՁ դարում» եւ նմանատիպ այլ վերտառություններով նրա դասախոսությունները, նրան անվանում է «Հայ երաժշտության փրկիչ»:

Ամենայն Հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանը նրա ստեղծագործությունների ոգեշնչողն էր, նրա սրտակից բարեկամը: Տաղանդավոր նկարիչներ Փանոս Թերլեմեզյանն ու Եղիշե Թադեոսյանը նրա արվեստի երկրպագուներն էին, անբաժան մտերիմները: Ավետիք Իսահակյանը, Հովհաննես Հովհաննիսյանը, Դերենիկ Դեմիրճյանը, Գարեգին Լեւոնյանը եւ շատ ուրիշներ, հայ մշակավոր գիտնականներ Մանուկ Աբեղյանը, Հրաչյա Աճառյանը եւ Կոմիտասի բազմաթիվ աշակերտներն իրենց այցելություններով, ջերմ հանդիպումներով մեծ ոգեւորություն են պատճառել Կոմիտասին եւ նպաստել նրա ստեղծագործությունների ստեղծմանը:

Կոմիտասի աշակերտներից շատերը վառ հիշողություններ ունեն նրա խմբավարական արվեստի, նրա անսպառ եռանդի եւ ռոմանտիկական ոգեշնչումների մասին: Նրանցից են Մելքոն Քրիշչյանը, Կոմիտասի կենսագիր Աղավնի Մեսրոպյանը, Վահան Տեր-Առաքելյանը, Վարդան Սարգսյանը, ուրիշներ:

Պատրաստեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԽԱՆՏՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆԸ՝ SMS-ՈՎ

Թիֆլիսի վարորդներն այսուհետ կարող են օգտվել sms ծառայությունից, տեղեկանալ կայանման կանոնների խախտման եւ կայանման ծառայությունների մասին: Տուգանքները ժամանակին մուծելու համար, վարորդները կարճ հաղորդագրություն կստանան:

Վարորդն իմանում է կայանատեղիներից օգտվելու որքան ժամանակ ունի, իսկ ժամկետը լրանալուց 10 օր առաջ կստանա հատուկ զգուշացում: Տեղեկատվություն կտրամադրվի նաեւ մեքենան տուգանալին հրապարակ տեղափոխելու մասին:

Ծառայությունն ակտիվացնելու համար, հարկավոր է www.parking.tbilisi.gov.ge-ում գրանցում անցնել:

Հիշեցնենք, որ նոր կարգավորումներով մայրաքաղաքի վարորդները որոշ կենտրոնական փողոցներում ստիպված են լինելու կայանման համար ժամավճար մու-

ծել: Հուլիսի 1-ից նոր կարգը կսկսի գործել քաղաքի պատմական հատվածում Ափխազի (նախկին Լեսելիձե) փողոցից:

Այս նորամուծությունն, ըստ նախաձեռնողների, օգնելու է մայրաքաղաքում նվազեցնել մեքենաների քանակը: Վճարում հնարավոր կլինի իրականացնել ինչպես բջջային հավելվածի, այնպես էլ՝ փողոցներում տեղադրված սարքերի միջոցով:

Հայտարարվել է, որ կայանման ծառայությունից ստացված բոլոր միջոցները ուղղվելու են հասարակական տրանսպորտի զարգացմանը:

ԹԲԻԼԻՍԻՈՒՄ ՍԿՍԵԼ Է ԳՈՐԾԵԼ CAR-SHARING-Ի ՏԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Թիֆլիսում բացվել է Car-Sharing-ի ծառայություն, որը հնարավորություն է տալիս քաղաքի ցանկացած կետից էլեկտրամոբիլ վարձել:



Car-Sharing-ից օգտվել հնարավոր է բջջային հավելվածի միջոցով, որը թույլ է տալիս գտնել հաճախորդի հարակից տարածքում գտնվող ազատ մեքենաները: Հավելվածը հաճախորդի համար կբացի ավտոմեքենայի դուռը, այսպիսով՝ վարորդը բանալի կարիք չի ունենա:

- Ընդհանուր ավտոծառայությունն արդեն աշխատում է, քաղաքացիները կարող են օգտվել դրանից: Մինչ այդ, մենք փորձնական ռեժիմով էինք աշխա-

տում: Այս պահին արդեն 50 էլեկտրամոբիլ ունենք: Սպասում ենք նոր մեքենաների, առաջին փուլում կունենանք 300 մեքենա, ծրագրում ենք 3 000 էլեկտրամոբիլ գնել,- Վրաստանի հանրային հեռարձակողի տեղումն հայտարարել է Aicar կազմակերպության ղեկավար Գիորգի Խուրոձե, որը ներկայացնում է Car-Sharing ծրագիրը:

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՅԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՆԻԿՈՒ ՓԱՇԽՅԱՆ. «ՄԵՆՔ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԵՏ ԲԱՐՁՐ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԵՐԿԻՈՍՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆՔ»

ՀԱՐԵՎԱՆՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՏԿԵՐՎՈՒՄ ԵՆ ԽԱՂԱՊՈՒԹՅԱՆ ՕՐԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

(Սկզբը՝ 1-ին էջում)

Ի հարկե, մենք ունենք ոչ միայն հարեւաններ, որոնց հետ հարաբերություններն այնքան էլ լավ չեն, այլև ունենք հարեւաններ, ուն հետ ունենք բարձր մակարդակի հարաբերություններ: Ես նկատի ունեմ Վրաստանն ու Իրանը, որոնց հետ մեր հարաբերություններն իսկապես բարձր մակարդակի վրա են

գտնվում: Այդ երկրների հետ ունենք բարձր մակարդակի երկխոսություն: Եվ փորձում ենք ավելի զարգացնել մեր հարաբերությունները:

Գիտեք, որ, ցավոք, Թուրքիայի ու Ադրբեջանի հետ մենք, ըստ էության, չունենք դիվանագիտական հարաբերություններ, եւ սրանով ամեն ինչ ասված է: Ադրբեջանի պարագան բոլորիս համար պարզ է: Թուրքիան Հայաստանի հետ հարաբե-

րությունների հաստատումը կապում է Ադրբեջանի հետ մեր հարաբերություններով: ասաց Փաշինյանը:

Նիկոլ Փաշինյանը նշեց, որ Հայաստանը Թուրքիայի հետ հարաբերությունների հաստատման վերաբերյալ իր դիրքորոշումը չի փոխել, իսկ հարեւան երկրների հետ հարաբերությունները պատկերացնում է խաղաղության օրակարգի շրջանակներում:

ԱԶԿՅՈՒԹՅՈՒՆ` ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆԸ

Ապրիլի 11-ին, Ստրասբուրգ կատարած աշխատանքային այցի շրջանակներում, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանդիպում ունեցավ Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղար Թորբյորն Յագլանդի, Եվրոպայի խորհրդի տնօրեն Կրիստինա Սարկիսյանի և նախագահ Լիլիան Մորի-Պասկիեի հետ:

Կայացած հանդիպումներում, կողմերը քննարկել են Հայաստան-ԵՄ փոխգործակցության խորացման հարցեր: Հանդիպման ընդգծվեց Հայաստանում ժողովրդավարության աջակցության ցուցաբերման հարցում Եվրոպայի խորհրդի պատրաստակամությունը: Կողմերն անդրադարձան Հայաստան-ԵՄ գործընկերության 2019-2022 թթ. գործընկերությունների ծրագրի շրջանակում իրականացվող քայլերին եւ կարելու էր քննարկել շրջանակում երկուստեք ստանձնած պարտավորությունների ամբողջական կատարումը:

Ձրուցակիցները մտքեր փոխանակեցին Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հարցի եւ տարածաշրջանային զարգացումների շուրջ:



Ձրուցակիցները մտքեր փոխանակեցին Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հարցի եւ տարածաշրջանային զարգացումների շուրջ:

ՔՆՆԱՐԿՎԵԼ ԵՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ «ԱԶՆԱՎՈՒՐ» ԿԵՆՏՐՈՆԻ ԱՏԵՂԾՄԱՆ ՀԱՐՑԵՐԸ



Հանդիպմանը քննարկվել են «Ազնավուր» հիմնադրամի գործունեությանը եւ, մասնավորապես, առաջին մշակութային նախագծին՝ Երեւանում «Ազ-

Ապրիլի 10-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանն ընդունել է աշխարհահռչակ շանսոնյե Շառլ Ազնավուրի որդուն՝ «Ազնավուր» հիմնադրամի համահիմնադիր Նիկոլա Ազնավուրին եւ հիմնադրամի գործադիր տնօրեն Կրիստինա Սարկիսյանին:

նավուր» կենտրոնի ստեղծմանը վերաբերող հարցեր: Նախատեսվում է, որ կենտրոնում կգործեն Շառլ Ազնավուրի ինտերակտիվ, տեխնոլոգիապես զերիազեցած բանազարանը եւ երիտասարդների համար եզակի կրթամշակութային կենտրոն:

Նիկոլ Փաշինյանն ընդգծել է Երեւանում Շառլ Ազնավուրի կյանքի, գործունեության եւ կարիերայի մասին կենտրոնի

կառուցումը հայ ժողովրդի ու Հայաստանի հարգանքի տուրքն է Մեծն հայի հիշատակին: Վարչապետն իր աջակցությունն է հայտնել ամծամբ Շառլ Ազնավուրի կողմից մշակված նախագծի իրականացմանը եւ հանձնարարել պատկան գերատեսչությունների պատասխանատուներին սերտ համագործակցել «Ազնավուր» հիմնադրամի հետ այս ուղղությամբ:

ՆՈՐ ԶԵՎԱԶԱԾ` «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԵՌՈՒՄՏԱՄԱՐԱԹՈՆԻ ՀԱՄԱՐ

«Հայաստան» համահայկական հիմնադրամը հայտարարում է, որ «Ժամանակ» օրաթերթում տպագրված հոդվածը, ըստ որի, «Հայաստան» համահայկական հիմնադրամի ամենամյա հեռուստամրաբանն այս տարի կարող է ընդհանրապես չանցկացվել, չի համապատասխանում իրականությանը:

«Հիմնադրամը մշակել է նոր ռազմավարություն, որի արդյունքում է՛լ ավելի են ընդլայնվելու Հիմնադրամ-ՀՀ կառավարություն-տեղական ինք-

նա կառավարման մարմիններ հարաբերությունները: Հայաստանի նոր իշխանության հետ համագործակցությունն է՛լ ավելի է զարգացել ու խորա-

բարեբերություններ» ունենալու բոլոր լուրերը կեղծ են:

«Հայաստան» համահայկական հիմնադրամը հասարակության լայն զանգվածներին շուտով համապարփակ տեղեկություն կտրամադրի տեղի ունեցած փոփոխությունների եւ առաջիկա ծրագրերի մասին»,- նշված է հայտարարության մեջ:

ՄԵՐԺՎԵԼ Է ՌՈՒԲԵՐՏ ՔՈԶԱՐՅԱՆԻ ՔՐԵՆԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԲՈՂՈՔԸ

ԿԱԼԱՆՔԻ ՏԱԿ Է ՄՆՈՒՄ ՆԱԵՎ ՄԱՆԿԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ

Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը մերժեց Հայաստանի երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի անձեռնմխելիության հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ բողոքի քննությունը:

Հայաստանի երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի նկատմամբ անձեռնմխելիության հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ պաշտպանական խմբի ներկայացրած բողոքի քննությունն ավարտվել է ապրիլի 11-ին: 2008 թվականի մարտի 1-2-ն ընկած ժամանակահատվածում, Երեւան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ քրեական գործով Հայաստանի երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանին, Հայաստանի պաշտպանության նախկին նախարար Միքայել

Հարությունյանին եւ ՀԱՊԿ գլխավոր քարտուղար Յուրի Խաչատուրովին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նրանք այլ անձանց հետ նախնական համաձայնությամբ տապալել են Հայաստանի սահմանադրական կարգը: Միքայել Հարությունյանի նկատմամբ հետախուզում է հայտարարվել, Յուրի Խաչատուրովը 5 միլիոն դրամ գրավի դիմաց ազատ է արձակվել, իսկ Ռոբերտ Քոչարյանը կալանավորված է:

Ռոբերտ Քոչարյանի պաշտպանները բողոքարկել էին կալանավորման

որոշումը: Հայաստանի վերաքննիչ դատարանը մերժեց ԱԺ նախկին պատգամավոր, ԵԿՄ նախկին նախագահ Մանվել Գրիգորյանի պաշտպանների բողոքը. նա կշարունակի մնալ անազատության մեջ:

Առաջին աստիճանի դատարանի՝ նախկին պատգամավորի կալանքը եւս երկու ամսով երկարաձգելու վերաբերյալ որոշումը մնացել է ուժի մեջ:

Նշենք, որ Մանվել Գրիգորյանը մեղադրվում է ապօրինի կերպով գեներալ-մայոր պահելու, գույք յուրացնելու, հարկերի վճարումից խուսափելու, պետական միջոցները վատնելու եւ շորթմամբ գույքի հափշտակությունը կազմակերպելու մեջ:

ՍՏՈՐԱԳՐՎԵԼ Է ԱՊՐԻԼԻ 24-Ը ԱԶԳՍԻՆ ՕՐ ՀՈԳՍԿԵԼՈՒ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը ստորագրել է ապրիլի 24-ը Ֆրանսիայում Հայոց Ցեղասպանության հիշատակի ազգային օր հռչակելու մասին հրամանագիրը:

Հրամանագրում նշվում է, որ յուրաքանչյուր տարի ապրիլի 24-ին Ֆրանսիայում կնշվի Հայոց Ցեղասպանության հիշատակման ազգային օրը, յուրաքանչյուր տարի այդ օրը Փարիզում միջոցառում կանցկացվի. նմանատիպ միջոցառումներ կարող են կազմակերպել նաեւ մյուս քաղաքները:

Հիշեցնենք, որ Ֆրանսիան Հայոց Ցեղասպանությունը ճանաչել է 2001թ. օրենքի ուժով, իսկ 2016թ. քրեականացրել է Հայոց ցեղասպանության ժխտումը:

ԻՏԱԽԱՅԻ ՊԱՏՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՊԱՍՏԸ ՀԱՆԱԳԵՑ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ապրիլի 10-ին Իտալիայի Պարզամավորների պալատն ընդունեց բանաչեւ, որով երկրի կառավարությանը կոչ է արվում «պաշտոնապես ճանաչել Հայոց Ցեղասպանությունը» եւ խնդրին տալ միջազգային գնահատական:

Բանաչեւը ստացել է 382 կողմ եւ 0 դեմ ձայներ, 43 պարզամավոր չեռնպահ է մնացել:

ԿԱՆՑԿԱՑՎԻ «ԱՐՄՍ ԽԱԶՍՔՅԱՆ» ՄԻՋԱԶԳՍԻՆ ՄԻՃՈՒՅՑԸ

Հունիսի 6-ին՝ մեծանուն կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի ծննդյան օրը, Երեւանում մեկնարկելիք Խաչատրյանի 15-րդ միջազգային մրցույթին կմասնակցի աշխարհի 12 երկրի 30 երաժիշտ:

Մրցույթն այս տարի կայանալու է «Պաշնամուր» մասնագիտությամբ: Մասնակիցները ներկայացնում են Հայաստանը, ԱՄՆ-ը, Կանադան, Ֆրանսիան, Իտալիան, Ճապոնիան, Հինաստանը, Հարավային Կորեան, Թաիլանդը, ՌԴ-ն, Ղազախստանը, Ուկրաինան: Խաչատրյանի 15-րդ միջազգային մրցույթի ժյուրին նախագահելու է աշխարհում մեծ ճանաչում վայելող դաշնակահար-դիրիժոր Վահագն Պալայանը: Խաչատրյանի միջազգային մրցույթը Միջազգային երաժշտական մրցույթների համաշխարհային ֆեդերացիայի (World Federation of International Music Competitions) անդամ է: Մրցույթն անցկացվում է Հայաստանի մշակույթի նախարարության, «Արամ Խաչատրյան-մրցույթ» մշակութային հիմնադրամի համատեղ ջանքերի շնորհիվ, գործընկերը ԱՊՀ Հումանիտար համագործակցության միջպետական հիմնադրամն է:

ԱԿՏՈՎԱՐ. ՏՈՒՇԵԼ Է 20 ԳԻՆՃԱՌԱՅՈՂ

Ապրիլի 12-ին Հայաստանում ավարտված ի հերեւանքով տուժել է 20 զինծառայող: Դեպքը տեղի է ունեցել Մեղրի-Ծիրանի շրջը կապող ավտոմայրուղու վրա, մայրաքաղաքից 370 կիլոմետր հեռավորության վրա:

«Զիլ» մակնիշի ավտոմեքենան, որի միջոցով ուղևորվում էին զինծառայողները, դուրս է եկել ճանապարհի երթևեկելի գոտուց, բախվել ժայռին եւ կողաշրջվել: Տուժածները տեղափոխվել են Մեղրիի հիվանդանոց: Նրանց կյանքին վրանգ չի սպառնում:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

15.04.2019. Ավագ երկուշաբթի

ԱՊՐԻԼ

Հիսուսի հաղթական մուտքը Երուսաղեմ

16.04.2019. Ավագ երեքշաբթի հիշատակվում է «Տասրկույսերի» առակը:



18.04.2019. Ավագ հինգշաբթի

19.04.2019. Ավագ ուրբաթ

20.04.2019.

17.04.2019. Ավագ չորեքշաբթի

17.04.2019. Ծաղկազարդ. Ծրագալույց Ձատկի

ՆԵՎԵՑ ՍՈՒՐԲ ԱՎԵՏՄԱՆ ՏՈՆԸ

Ապրիլի 7-ին Հայ Առաքելական եկեղեցին տոնեց Սուրբ Ավետման տոնը: Տոնը կապված է ավետարանական պատմության հետ, ըստ որի, Մարիամ Աստվածածնի մոտ է գալիս Աստծո կողմից ուղարկված Գաբրիել հրեշտակը և ավետում, որ նրանից ծնվելու է Աստծո որդին՝ մարդկության Փրկիչը: Տոնը «Ավետում» է կոչվում, որովհետև «Ավետել» նշանակում է «ուրախ լուր հայտնել»:

Վերջին տարիներին Ն.Ս.Ս.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի բարձր տնօրինությանը, Սուրբ Ավետման տոնը Հայաստանում հռչակվել է իբրև Մայրության օրհնության օր: Հայաստանում Ապրիլի 7-ը նշվում է նաև որպես Մայրության և գեղեցկության տոն:

Վրաստանում Հայաստանի արտակարգ և լիազոր դեսպան Ռուբեն Սաղոյանի տիկին Մերի Սաղոյանը և Հայաստանի հյուպատոս Մարինա Խաչատրյանը: Ներկայումս փոխանցվեցին Վրաստանում Հայաստանի լիազոր և արտակարգ դեսպան Ռուբեն Սաղոյանի ու Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն Եպիսկոպոս Միրզախանյանի շնորհավորանքները: Թեյի սեղանի շուրջ ծավալված ուրախ խոսք ու զրույցին առանձնակի աշխուժություն հաղորդեց Կենտրոնի աշխատակից Գոհար Մազմանյանի՝ այդ օրվա համար հատուկ մշակված գրական վիկտորինան: Երեկոյի ավարտին տիկին Մերին ներկայացրին փոխանցեց պարուն դեսպանի՝ տոնին մասնակից կանանց համար առաքած հուշանվերները:

ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱՂԱՅԱՆ

Միջոցառմանը ներկա էին

ՃԱՆՐԱՄԱՐՏ



Բաթումիում մեկնարկեց ժամանարտի եվրոպայի առաջնությունը, որի բացմանը ներկա էին Վրաստանի նախագահ Սալոմե Ջուրաբիշվիլին, Աջարիայի Ինքնավար Հանրապետության կառավարության ղեկավար Թոնոնիկե Ռիժվա-

ԱԿՏԻՎՈՒՄ՝ ՏԱՐԲԵՐ ԱՐԺՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՊԱՆԵՐ

ձեն, Վրաստանի կրթության, մշակույթի և սպորտի փոխնախարար Միխեիլ Գիորգաձեն, օլիմպիական խաղերի եռակի չեմպիոն, Վրաստանի ծանրամարտի ֆեդերացիայի նախագահ Կախի Կախիշվիլին, ծանրամարտի եվրոպական ֆեդերացիայի նախագահ Անտոնիո Ռուտոն:

կարգում հրման վարժությունում, արժանացավ Շոթա Միշվելաձեն, մինչև 89 կգ քաշային կարգում, նույնպես հրման վարժությունում Ռեւազ Դավիթաձեն:

Առաջնությունում Վրաստանի հավաքականը իր ակտիվում արդեն գրանցել է տարբեր արժողության 6 մեդալ (2 ոսկե, 3 արծաթե և 1 բրոնզե): Մայրցամաքի չեմպիոնի կոչմանը՝ 61 կգ քաշային

Առաջին մեդալները նվաճեցին նաև հայաստանցի մարզիկները: 89 կգ քաշային կարգում Հակոբ Մկրտչյանը պոկում վարժությունում և երկամարտում արժանացավ ոսկե մեդալների: Այդ կարգում Դավիթ Հովհաննիսյանը պոկում վարժությունում ստացավ բրոնզե մեդալ: Մրցաշարը շարունակվում է:

ՔՐԵՆԱԿԱՆ

ՉԻՈՒ ԵՎ ԱՎԱՆԱԿԻ ՄԻՍ, ՏԱՎԱՐԻ ՄՍԻ ՓՈԽԱՐԵՆ

Վրաստանի ֆինանսների նախարարության քննչական ծառայությունը, Հակակոռուպցիոն գործակալության և Սննդի ազգային գործակալության հետ համատեղ, խարդախության մեղադրանքով երկու մարդու են ձերբակալել:



Հետաքննությունը պարզել է, որ մեղադրյալները տարբեր շրջաններից ձիու և ավանակի միս են գնել, որոնք տրանսպորտով փոխադրել են Թբիլիսիի օբյեկտներից մեկում գտնվող, այսպես կոչված, ինքնագործ սպանդանոց: Առանց որևէ գրանցման և սանիտարական չափանիշների պահպանման պայմաններում, ձիու և ավանակի միսը վերամշակվել են վաճառվել է շուկաներում և սննդի տարբեր օբյեկտներում՝ որպես տավարի միս:

Ըստ գերատեսչության տվյալների, շուկայից են մի քանի օբյեկտներից մեծ քանակությամբ միս է առգրավվել, որն, ըստ փորձագետի եզրակացության, պարունակում է ձիու և էջի ԴՆԹ, իսկ այսպես կոչված սպանդանոցում հայտնաբերել են այդ կենդանիների մնացորդները:

Հետաքննությունը կատարվում է Վրաստանի Քրեական օրենսգրքի 180-րդ հոդվածի երկրորդ մասով: Հանցանքը նախատեսում է ազատազրկում՝ 4-7 տարի ժամկետով:

«Վրաստան» թերթի խմբագրությունը, Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան պետհայրամայի թատրոնը, «Վրաստանի հայերի միությունը» խոր վշտով տեղեկացան, որ իր 60-ամյակի օրը հանկարծամահ եղավ մեր մեծ բարեկամ Ալեքսանդր Թորգոմի ՄԵԼՔՈՒՄՅԱՆԸ

Եւ ցավակցուն են բերուն տիկին Վեներային, տիկին ժաննային, Թորգոմին սիրելի որդու, ամուսնու, հոր անժամանակ մահվան կապակցությամբ:



«Վրաստան» թերթի խմբագրակազմը զորակցում է թերթի սրբագրիչ Սուսաննա Ավետյանին, սիրելի մոր՝ Ռոզա Բաղդասարի ԱՎԵՏՅԱՆԻ

մահվան կապակցությամբ և ցավակցուն հանգուցյալի հարազատներին, մերձավորներին ու բարեկամներին:



1	2	3	4	5	6	7	8
	9						
10			11	12		13	
			14				
	15	16			17		
18			19				
		20					21
	22	23		24	25	26	
27			28			29	
	30				31		
32			33				
	34	35			36	37	38
			39				
40	41	42					
43				44	45		46
	47		48	49		50	
		51		52			53
					54		

Խ Ա Չ Բ Ա Ռ

ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ. 1.Մադրասում լույս տեսած հայ առաջին պարբերականը: 5.Հակոբ Պարոնյանի երգիծական ամսագիրը: 9.Ստորադասական շաղկապ: 10.Վրացական գինի: 13.Դ.Մենդելեևի աղյուսակի 5-րդ քիմիական տարրը: 14.Թիֆլիսում հրատարակված «Հուշարար» պարբերականի խմբագիրը ... Վրույր: 15.Տոն, ցեղ, ...: 17.Տղամարդու երգչաձայն: 18.Հովհ.Թումանյանի հերոս: 19.Նեո, Եվային մոլորեցնողը: 20.«Մենք ամենքս ... ենք կյանքում» (Հովհ.Թումանյան): 22.Հ.Սահյանի ծննդավայր գյուղը: 26.Հայերիս դրամական միավորը: 27.Ե.Չարենցի ստեղծագործություններից: 28.Ղազարխանի մայրաքաղաքը մեկ ամիս առաջ: 30.Պարսից շահ: 31.Հայկական հայտնի հին համալսարան: 32.Ուրբ բառի գրաբարյան ձևը: 33.«... աշխույժ խմբերով, աղաղակով, աղմուկով» (Հ.Շիրազ): 34.Անտառային թռչուն: 36.Պատիճավոր, ընդավոր բույս: 39.Բագրատունի իշխան: 41.Գյուղական վառելիք: 43.Շաբաթվա օր: 44.Հայտնի փողոց Թբիլիսիում: 47.«Ո՛չ ... ունի ուժեղը, ո՛չ վախ» (Հովհ.Թումանյան): 50.Ռաֆֆու պատմավեպերից՝ «Դավիթ ...»: 51.Նար-Դոսի հերոսուհի: 52.«Նա ճեմարանի պահակն էր ծերուկ՝

Անտուն ու անտեր այդ ... քեռին» (Պ.Սեւակ): 53.Անձնական դերանուն: 54.Հայ անվանի գուսան:

ՈՐՂԱՅԱՅԱՅ. 1.Թիֆլիսում լույս ընծայված «Մշակ» թերթի հիմնադիրն ու խմբագիրը: 2.Քարածխի հարուստ հանքավայր Դոն գետի ափին: 3.Թուրքի տեսակ: 4.Չ.Վերդիի օպերաներից: 5.Հայ կաթողիկոս, ում ... Հայրիկ են կոչել: 6.Մեծ երաժշտագետ, հայ երգի Մեսրոպ Մաշտոցը: 7.Ուսուցչապետ: 8.Արիան հայեցի: 11.«Ով է ..., ով մեղավոր, մենք չդատենք» (Ի.Կռիլով): 12... Սկալա, ... Պաս, ... Պլատա: 16.«Նորավեպի իշխան» պատվանուն են տվել Հայոց Մեծ եղեռնի այդ գոհին: 19.«Աբու-Լալա Մահարի»-ի գլուխները: 21.Մամիկոնյանների գավառը: 22.Բույսի տեսակ: 23.Անորոշ դերանուն: 24.Անապատ Չիլիում: 25.Պետություն Աֆրիկայում: 29.Այլուրի մեջ կորած: 35.Հովհ.Թումանյանի ստեղծագործություններից: 37.Վրաց անվանի գրող ... Գրիշաշվիլի: 38.Ախալքալաքի գյուղերից: 40.Գեղեցիկ ծաղիկ: 41.Բագրատունի թագավոր: 42.Եվ պատուհան, Ե՛լ կահույքի մաս: 45.Անորոշ դերանուն: 46.Գետ Սիբիրում: 48.Լարային երաժշտական գործիք: 49.Քաղաք Իրաքում:

Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲՈՒ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ. 1.Կաթված: 6.Փիլիսոփա: 9.Ավետա: 10.Շորթ: 11.Լակոտ: 13.Փքաբլիթ: 14.Ուսարի: 15.Լեպտա: 16.Սամիթ: 18.Մանանա: 19.Տրակո: 21.Ջուլիակ: 22.Նիստ: 24.Ամոն: 26.Պասսատ: 28.Գրչակ: 31.Տուրքին: 32.Մայր: 34.Ինգուլ: 35.Լուսակա: 36.Ատրուշան: 38.Սուրան: 39.Արի: 40.Տարերք: 41.Մանուետր: 42.Ալանիա:

ՈՐՂԱՅԱՅԱՅ. 1.Կաշալոտ: 2.Թերապիա: 3.Ծալք: 4.Քեմբրիջ: 5.Մալթա: 6.Փակաղակ: 7.Սալամանդր: 8.Փիլիպոս: 12.Տուգանք: 13.Փաստ: 17.Թուման: 18.Մադան: 20.Կոնտրալտո: 23.Կերպաս: 25.Մագուրկա: 26.Պիկարոր: 27.Տանուտեր: 28.Գրին: 29.Չիգորին: 30.Կալկաթա: 33.Սանտե: 37.Արքա:

Խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774 www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com

Գրանցման վկայական № 4 4 - 1439 «ԿՈԼՈՐ» իրատարակչություն

“ВРАСТАН” Тбилиси, Грузия <VRASTAN> Georgia, Tbilisi Индекс 66445